ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1894-1896 ԹԹ.

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ռ. Հ.

XIX դարի վերջին քառորդից օսմանյան իշխանությունների վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով արևմտահայությունը հայտնվեց խիստ ծանր վիճակում: Ինչպես նկատել է Ա. Համբարյանը՝ «Թուրքական բռնակալական վարչակարգը դատապարտել էր նրան ոչ միայն աղքատության ու թշվառության, այլև ֆիզիկական բնաջնջման»[1]:

Մեծ ծավալ էին ընդունել քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրոնական հալածանքները: Կ. Պոլսից "Русские ведомости" թերթի թղթակիցը 1890 թ. նոյեմբերի 1-ին հաղորդում էր, որ թուրքական իշխանությունների կողմից Հայ առաքելական եկեղեցու ծիսակատարությունների, ժամերգության ժամանակ արգելվել են հայ թագավորներ Աբգարի, Տրդատի, նահատակներ Վարդան Մամիկոնյանի և այլոց անունների հիշատակումը, քանզի այն դիտարկվում էր որպես «վտանգավոր քաղաքական քարոզչություն և հայկական թագավորության վերականգնում»[2]: Օսմանյան իշխանությունները ձգտում էին ջնջել ժողովրդի պատմական հիշողությունը, որը ազգապահպանության կարևոր գործոններից էր: 1895 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքը Թուրքիայի վարչապետին հղած նամակում գրում էր. «Իսկ կրոնի ազատության տեսակետով՝ հայոց Ազգն ենթակա է այնպիսի ճնշումներու, որ կը զրկին զինքը նույնիսկ հոգևոր մխիթարությունե և իր քրիստոնեական կրոնը ազատորեն պաշտելու իրավունքեն... Առանց փոփոխման և հապավման չարտոնվիր նաև հայոց պատմության տպագրությունն ու հրատարակությունն, ինչպես նաև դասագրքոց մեջ հայոց նախնի թագավորաց, իշխանաց և զորապետաց անուններն կը հանվին և այլ անուններ կը դրվին հանրային կրթության պաշտոնյաներուն կողմե, ինչպես նաև կարգիլվի հրատարակությանց մեջ գործածել քաղաքներու հայերեն անուններն»[3]:

XIX դարի վերջերից է՛լ ավելի վայրագ բնույթ էր ստացել Թուրքիայի քրիստոնյա բնակչության, մասնավորապես արևմտահայության տնտեսական շահագործումը: Տնտեսական հզորությունից նրանց զրկելու նպատակով թուրքական կառավարությունը հայերից, հույներից և հրեաներից բռնագրավում էր հողերը: Հայերն ամենուրեք ենթարկվում էին նաև քուրդ ցեղապետերի հալածանքներին: Ծանր էր հատկապես հայկական և հայաբնակ այն շրջանների վիճակը, որտեղ հարկահանության իրավունքը պատկանում էր քուրդ

---

[1] **Համբարյան Ա.,** *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 6:*

[2] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 43, ց. 1, գ. 8, թ. 2:*

[3] *Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 3, թ. 4:*

ցեղապետերին: Վերջիններս հայերից գանձում էին ոչ միայն պետական հարկը, այլև դրա տասնապատիկը վերցնում էին իրենց: Հարկ է նշել, որ հայ գյուղացին մահմեդականներից հինգ անգամ ավելի հարկ էր վճարում: Այսպիսով, հայ հողագործի արյուն-քրտինքով և տքնաջան աշխատանքով ստեղծված բարիքի 70-80%-ը անցնում էր պետությանն ու հողատիրոջը: Ծանր և հյուծիչ հարկային քաղաքականությունը միտում ուներ թուլացնելու հայերի տընտեսական հզորությունը, զրկել ապրուստի միջոցներից, հարկադրել բռնել տարագրության ուղին: Այլ կերպ ասած՝ նաև այդ միջոցով էին թուրքերը ձգտում իրականացնել հայկական բոլոր նահանգների հայաթափման զազրելի ծրագիրը: «Գյուղացիք այս վիճակեն հուսահատ,- գրում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը,- ընտանյոք կը գաղթեն ուրիշ տեղեր՝ հարձակումներ կրելով նաև ճամբուն և հոն կորսնցնելով իրենց գոյից մնացորդն, այլք կը թողուն իրենց ընտանիքն ու առանձին օտար երկիրներ կը դիմեն ապրուստ ճարելու համար, սակայն ասոնք ալ իրենց վերադարձին չեն ընդունվիր այլևս իրենց հայրենի երկրին մեջ և կ՚արգիլվին իրենց ընտանյաց քով դառնալու՝ հանցավոր համարվելով օտարության դիմելնուն համար»[4]:

Չնայած այս ամենին, XIX դ. վերջին օսմանյան բուրժուազիան հիմնականում բաղկացած էր ոչ մահմեդական ժողովուրդների ներկայացուցիչներից: Քրիստոնյա հպատակներն իրենց սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացմամբ շատ ավելի բարձր մակարդակի էին, քան թուրքերը: Դա առաջացնում էր ատելության և թշնամանքի հետ միաձուլված մրցակցություն քրիստոնյաների հանդեպ. թուրք գործարար տարրը տենդագին ելք էր որոնում ստեղծված իրավիճակից, ցանկանալով տեր դառնալ երկրի ողջ հարստություններին, հանուն այդ նպատակի՝ կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև: Նաև այս մտայնությունն էր, որ, ի վերջո, հանգեցրեց որոշակի ծրագրի բաղկացուցիչ գաղափարի, որն էլ իր մարմնավորումը ստացավ հայոց ցեղասպանությունում: Ըստ Ջ. Կիրակոսյանի՝ «Հայոց տնտեսական ակտիվությունն էր, որ գրգռում ու կատաղեցնում էր թուրք բուրժուազիայի քաղաքական պարագլուխներին. նրանք այլևս չէին հանդուրժելու երկրի ներքին շուկայում հայոց տնտեսական վերընթացը»[5]:

Համիդյան բռնակալության տարիներին տնտեսական բազմաբնույթ ճնշումները զուգակցվում էին ազգայնամոլ քաղաքականությամբ, ազգային հողի վրա տեղի ունեցող խժդժություններով, քաղաքական հալածանքներով և հետապնդումներով: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով միջազգային դիվանագիտության հարց դարձավ Հայկական հարցը, որը մեծ տերություններին Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, դիվանագիտական և քաղաքական ճնշման բազմաթիվ հնարավորություններ էր

[4] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 3, թ. 3:*

[5] **Կիրակոսյան Ջ.,** *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Ե., 1982, էջ 122:*

ընձեռում: Բարենորոգումներ անցկացնելու ծրագրերը թուրք կառավարող վերնախավն ընկալեց ոչ միայն որպես Եվրոպայի կողմից իր ներքին գործերին միջամտելու միջոց, այլև Ռուսաստանի ազդեցության տարածում, որը հղի էր լուրջ վտանգներով: Իրենց հերթին, հայկական բարենորոգումների ծրագրի իրականացման տակ մեծ տերություններն առաջին հերթին հասկանում էին ռազմավարական հսկայական նշանակություն ունեցող տարածքում իրենց տնտեսական և քաղաքական ազդեցության ընդլայնում, ապա նաև, խաղալով հայ ժողովրդի ազատագրական իդեաների հետ, որպես Թուրքիայի ցանկալի մասնատում:

Թուրք կառավարող վերնախավի հիմնավորմամբ բարենորոգումների իրականացումն առաջին քայլը կլիներ Հայաստանի անկախության, վերականգնման ուղղությամբ, որից խուսափելու լավագույն միջոցը հայերի բնաջնջումն էր:

Ինչպես իր հուշերում գրում էր Աբդուլ Համիդը՝ մեծ տերությունները լավ գիտեն՝ «Բարենորոգումները պարունակում են իրենց մեջ մեր պետության կործանման պացիլները»[6]: Անհրաժեշտ էր հայազրկել Արևմտյան Հայաստանը և կայսրության հայաբնակ շրջանները: Ինչպես նկատել է Ջ. Բրայսը՝ հայության բնաջնջման ծրագիրը սուլթան Համիդը հղացավ ու ծրագրեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո: Դա քաջ գիտակցում էին նաև հայ հասարակական-քաղաքական շրջանակները, որոնք արևմտահայության նկատմամբ վերաբերմունքից արդեն զգում էին ջարդերի սպառնալիքը: «Բ. Դուռը Հայաստանում ռեֆորմներ մտցնելու համար չորս ամիս ժամանակ է պահանջել Եվրոպայից: Այդ չորս ամսվա ընթացքում նա ժամանակ կվաստակի, քուրդերը կավերեն Հայաստանը, կոչընչացնեն հայերին,- և ահա թուրքաց Հայաստանի հայերն բոլորն էլ ջնջված կլինեն»,- գրել է Գր. Արծրունին[7]: Արևմտահայության նկատմամբ վերաբերմունքը 1890-ական թթ. սկզբներին մարմնավորվեց «համիդիե» զորաջոկատների ստեղծմամբ, որը, ինչպես նշել է Լ. Մկրտչյանը, «փաստորեն նշանակում էր, որ կառավարությունը հասել է իր բազմաստիճան քաղաքականության հիմնական փուլին՝ կոտորածների կազմակերպմանը: Դա ըստ էության ազգային բնաջնջումը սկսելու պետական թույլատրություն էր»[8]:

«Համիդիե» ջոկատներն իսկական պատուհաս դարձան Օսմանյան Թուրքիայի համար և գործիք՝ կառավարության ձեռքին:

«Լը Նորդ» թերթը, 1892 թ. հունիսին անդրադառնալով Թուրքիայում տիրող ներքին վիճակին, նշել է. «Կ. Պոլսի գրավումից հետո անցել է 4,5 հարյուրամյակ, քաղաքակրթության փոքրագույն հետք իսկ չթողնելով ասիական քոչվորների ժառանգների վրա: Ինչպիսին նրանք եղել են վեց դար առաջ, երբ Թուրքեստանի լեռ

---

[6] *Տե՛ս* **Եազըճյան Գուրգեն,** *Սպտուլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980, էջ 819:*

[7] *Մշակ, 1880, N 182:*

[8] **Մկրտչյան Լ.,** *Արևմտահայության ցեղասպանության աբդուլհամիդյան քաղաքականությունը, Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Ե., 2001, էջ 65:*

ներում և հարթավայրերում իրենց գոյությունը պահպանում էին թալանի միջոցով, այդպիսին էլ մնացին մինչև օրս, երբ կոտորում ու կողոպտում են հազարավոր քրիստոնյաների»[9]:

«Ես չգիտեմ,- գրել է Ռոլան Ժեկմենը,- կարելի՞ է արդյոք մի որևէ այլ երկիր տեսնել, որի կառավարությունն այդպես ձգտեր իր սեփական նահանգները լցնել վայրի հորդաներով և ինքը նրանց առջև այսպիսի երկընտրանք դներ՝ կա՛մ ապրիր թալանով ու կողոպուտով, կա՛մ աղքատությունից ոչնչացիր»[10]:

Աբդուլ Համիդ II սուլթանի օրոք (1876-1909 թթ.) կառավարող վերնախավի գաղափարախոսությունը դարձավ պանիսլամիզմը (համաիսլամականություն): Օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականության և պետականության պահպանման ելքը սուլթանը տեսավ երկիրը միակրոն և էթնիկ առումով միատարր դարձնելու մեջ: «Ստեղծվեց պետությունը ճգնաժամից դուրս բերելու մանրակրկիտ մշակված, գործունակ, բայց էությամբ հրեշավոր ծրագիր: Այն ընդգրկում էր գործունեության բոլոր ոլորտները, ուներ ամուր գաղափարախոսական հենք՝ ի դեմս իսլամիզմի և օսմանիզմի հիմնարար դրույթների միախառնմանը»[11]: Ամերիկացի պատմաբան Ռ. Դեվիսոնն իրավամբ նկատել է, որ սուլթան Համիդը, լինելով իսլամական աշխարհի խալիֆը (հոգևոր առաջնորդը – Ռ. Գ.), մեծ նշանակություն էր տալիս «իսլամական համախմբվածության» կոչին, որն ինքնին սպառնում էր քրիստոնյա ազգերի գոյությանը Թուրքիայում[12]: Այն նաև բախվում էր Թուրքիայից դուրս բնակվող մահմեդական ժողովուրդների շահերին, քանզի «մահմեդականները շատ լավ գիտեին, որ հոգևոր առաջնորդի դերում սուլթանների նպատակն է թուրքական պետականության պահպանումը և ընդարձակումը»[13]:

Աբդուլ Համիդը որդեգրում է նաև օսմանյան հայրենիքի միասնականության և հզորության վերաբերյալ նոր օսմանների գաղափարախոսությունը, որը քարոզում էր օսմանյան հպատակների իրավահավասարություն՝ անկախ կրոնական և ազգային պատկանելությունից, պահանջում հավատարմություն և նվիրում ընդհանուր հայրենիքին՝ «միասնական ժողովրդի» օսմանիստական գաղափարից անցնելով «Օսմանյան կայսրության մահմեդական ժողովուրդների միավորման գաղափարին»[14]: Սակայն Օսմանյան Թուրքիայի ոչ մահմեդական և ոչ թուրք ժողովուրդներին մեկ՝ «օսմանյան ազգության» մեջ միաձուլելը զրկում էր նրանց ազգային ինքնորոշման

---

[9] *Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 126.*

[10] *Տե՛ս Положение армян в Турции до вмешательство держав в 1895 г., М., 1896, с. 62-63.*

[11] **Մկրտչյան Լ.,** *նշվ. հոդ., էջ 57:*

[12] **Davison R. H.** *The Modern Nations in Historical Perspective. Turkey, New Jersey, 1968, p. 94.*

[13] **Фирбюхер Г.** *Армения 1915. Уничтожение Турцией культурного народа, Е., 1991, с. 25.*

[14] **Սիմոնյան Հ.,** *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 38:*

արդարացի իրավունքից: Հպատակ ժողովուրդներն ըմբռնում էին, որ օսմանիզմը, մեղմ ասած, տանում է դեպի ազգային մշակույթի, բարքերի, կենցաղի վերացման, թուրքերի հետ ձուլման: Ուստի առաջինը մահմեդական ժողովուրդները (արաբները, ալբանացիները) հրաժարվեցին այդ կեղծ դրույթներից և վերստին անդամագրվեցին թուրքական տիրապետության ճիրաններից ազատագրվելուն: Ինչպես գրել է ամերիկյան հետազոտող Մ. Անդերսոնը՝ «կայսրության հանդեպ հավատարմությունն անկախ լեզվից, ազգությունից կամ կրոնից... որը քարոզում էին, որին ոմանք հավատում էին, ամենափոքր հնարավորությունն իսկ չի ունեցել դրան հասնելու»[15]:

Սակայն 1890-ական թթ. այդ գաղափարներն օգտագործեցին թուրքական իշխանությունները՝ հայկական կոտորածները պետական մակարդակի բարձրացնելու համար: «Ստեղծելով համապատասխան գաղափարախոսությունը, այն դնելով պետական քաղաքականության հիմքում՝ Աբդուլ Համիդ II-ը, փաստորեն, դարձավ հիմնադիրը պետական դոկտրինայի, որի էությունը անփոփոխ մնաց և ուղեցույց եղավ թե՛ երիտթուրքերի և թե՛ քեմալականների համար»,- գրել է Լ. Մկրտչյանը[16]:

1880-ական թթ. վերջերին և 1890-ական թթ. սկզբներին ջարդերի սպառնալիքն առկա էր Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության հայաբնակ շրջաններում: Այսպես, դեռևս 1888 թ. իշխանությունների դրդմամբ հարձակման էր ենթարկվել Մարաշից հարավ գտնվող զուտ հայաբնակ Ֆընտըճագ գյուղը, սակայն հայ երիտասարդներին հաջողվել էր ոչ միայն հետ մղել թշնամուն, այլև գերել մոտ 40 թուրքերի[17]:

Անգլիական հյուպատոսը, 1890 թ. հունիսի 20-ին անդրադառնալով Հալեպի վիլայեթում տիրող իրավիճակին, Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Կ. Ֆորդին հղած հաղորդագրությունում նշում է, որ Ադանայի և Հալեպի վիլայեթներում խիստ սրվել է թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ, և «եթե եռանդուն միջոցներ չձեռնարկվեն, ապա... թուրքերի այդ վերաբերմունքը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների»: Հարկ է նշել, որ հայ ազատագրական պայքարի աշխուժացման և ծավալման պայմաններում, բազմակի խտացնելով գույները, ցանկանալով արթնացնել մահմեդական կրոնամոլությունը և հրահրել կոտորածներ, թուրքական իշխանություններն ի լուր աշխարհի հայտարարում էին, որ ողջ կայսրության հայերը զինված են, կազմակերպել են հարյուրավոր զինված ջոկատներ և հարմար պահի են սպասում ապստամբություն բարձրացնելու համար: Հաղորդելով, որ Հասան Իզզեթ բեյի նահանգապետ նշանակվելուց հետո ուժեղացել են հալածանքները հայերի նկատմամբ, ավելացել կողոպուտի և թալանի դեպքերը, անհիմն մեղադրանքների ներկայացմամբ ձերբակալությունները, դիվանագետը եզրակաց-

---

[15] **Anderson M. S.** *The Eastern Question. 1774-1923. A Study in International Relations, New York, 1966, p. 276.*

[16] **Մկրտչյան Լ.,** *նշվ. հոդ., էջ 58:*

[17] **Ճինպաշեան Մ.,** *Ֆընտըճագ Ֆընտըճող, Մոնթեվիդէօ, 1949, էջ 31:*

նում է. «Եթե իրերի այսպիսի վիճակը շարունակվի՝ կարելի է զգուշանալ հասարակական հանդարտության խախտումից: Ես Ձեզ կարող եմ վստահեցնել, որ Ադանայի հայերը շատ հեռու են կոմիտեների կամ քաղաքական այլ գործերի մասին մտածելուց»[18]:

Հալեպի ռուսական հյուպատոս Մ. Յակիմանսկին Կ. Պոլսում ռուսական դեսպան Նելիդովին 1894 թ. դեկտեմբերի 15-ին հաղորդում էր Ալեքսանդրետի հայության ծանր վիճակի մասին, որն արդյունք էր գայմագամի ճնշումների: Նա կամայականորեն ձերբակալում էր հայերին, աքսորում «մի այլ վիլայեթ կամ նույնիսկ նույն վիլայեթի մի գավառից մյուսը», իսկ «բանտարկվածները, որպես քաղաքականապես անհուսալի հայեր, ազատվում էին փրկագին տալով՝ նայած իրենց հնարավորությանն ու նյութական վիճակին: Միայն նըրանք էին բանտարկված մնում, ովքեր չէին կարողանում բավարարել կայմակամի այդ պահանջները[19]»: Համոզվելով, որ «Մայիսյան բարենորոգումների» ծրագիրը մեծ տերությունների միջև առկա հակամարտությունների պատճառով մնալու է թղթի վրա, սուլթանը որոշեց հայերի բողոքի ձայնը խեղդել նոր ջարդերով, աննախադեպ կոտորածներով: Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնը, խոսելով մեծ տերությունների մասին, գրել է. «Սուլթանը մտադիր չէ իր խոստումները կատարել, որովհետև համոզված չէ, որ Եվրոպան համերաշխ է... հայկական գործը ձգձգվում է, որովհետև սուլթանն այդ հարցում եվրոպական միջամտության չի հավատում»[20]: Մեծ տերությունների նման դիրքորոշման և թողտվության պայմաններում էր, որ սուլթանը ոչ միայն չիրականացրեց բարենորոգումների ծրագիրը, այլև ձեռնամուխ եղավ հայկական ջարդերին: Ազգայնամոլ թուրք կառավարող վերնախավում ձևավորվում էր այն մտայնությունը, որ օսմանյան կայսրության քաղաքական, տարածքային և պետական միասնությունն ապահովելու համար անհրաժեշտություն է հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացումը:

Արդեն 1890-ական թթ. սկզբներին սուլթանական կառավարությունը ամենայն մանրամասնությամբ մշակել էր ջարդերի քստմնելի ծրագիրը՝ համապատասխան հանձնարարականներ հղելով տեղա-կան իշխանություններին: Մասնակի ջարդերը սկսվեցին դեռևս 1890 թ. Կարինի հայտնի դեպքերով: Ոտքի հանվեցին թուրք մոլեռանդ խառնամբոխը, քրդական ցեղերը, ոստիկանական ուժերը, բանակային կանոնավոր զորամասերը:

Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ 1890-ական թթ. կոտորածները և Կիլիկիո 1909 թ. ջարդերը Մեծ եղեռնից առաջ գլխավոր փորձերն էին՝ մեխանիզմների ընտրության, ճշգրտման, մշակման և

---

[18] *Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey. 1892-1893. Turkey, N 8 (1896), London, 1896, p. 32.*

[19] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան (այսուհետև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում), Ե., 1991, էջ 70:*

[20] *Տե՛ս* **Լեռ,** *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 182:*

կիրառման առումով: Խիստ կարևորվում էր հայոց ազատամարտի միջնաբերդերի՝ Սասունի, Վանի, Զեյթունի, լեռնային այլ բնակավայրերի մեկուսացումը և կոտորածը, քանզի թուրքական իշխանություններն իրավացիորեն երկյուղում էին այդ շրջանների հայության ընդվզումներից՝ դրանք դիտարկելով որպես հավանական ապստամբության կենտրոններ: Ուստի պատահական չէ, որ առաջին հարվածներն ուղղվեցին հենց այդ բնակավայրերին: Զերբակալվում էին տեղերում հեղինակություն վայելող հայերը, ազգային և մշակութային գործիչները (նպատակը՝ հայերին ղեկավար ուժից զրկելն էր), հայերից հավաքում էին զենքերը և, գրգռելով տեղերի մահմեդականների կրոնամոլությունը, սկսում կոտորածներ, դիմակայության հանդիպելու պարագայում՝ օգտագործում ոստիկանական ուժերը և բանակը: Համաձայն Յ. Լեփսիուսի հավաստի տեղեկության՝ զինվորական հրամանատարությունը զինում էր թուրք խուժանին, քրդերին և չերքեզներին, իսկ իրենք միջամտում էին միայն հայերի դիմադրության դեպքում[21]: Իրենց գործողություններն արդարացնելու համար թուրքական իշխանությունները, զինվորական հրամանատարությունը ապստամբության մեղադրանքներ էին ներկայացնում հայերին: Ինչպես գրել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանը Թուրքիայի մեծ վեզիրին հղած նամակում՝ «Ոստիկանք՝ խումբ-խումբ ձիերով կը շրջին գյուղերն խուզարկություններ կատարելու և տեղական իշխանությունք անոնց աջակից կարգած են քրդերն ու չերքեզները: Իրենց հաջողության համար անպատճառ պետք է քաղաքական դավի մը, ապստամբական շարժման կամ խորհուրդի մը հետքն ստեղծել և ճշմարտության երևույթ տալու համար խոստովանության մը վրա զայն հիմնել: Այսպիսի խոստովանություն մը խլելու համար կը գանակոծեն գյուղացիներն, կը խուզարկեն տուներն, և այս առթիվ կը գործվեն բռնաբարությունք...»[22]: Իսկ քաղաքացիական իշխանությունները «մի կողմից պետք է ջարդերի հրահրեին մահմեդական բնակչությանը, նախապատրաստեին նրան և ապահովեին նրան անպատժելիություն ցանկացած հանցագործության համար, մյուս կողմից՝ քրիստոնյաների և, մասնավորապես, հյուպատոսների առջև այդ իշխանությունները պետք է հնարավորին չափ անտեղյակություն խաղային...»[23]:

Ջարդերը, որոնք սկսվել էին դեռևս 1894 թ. սկզբներին, շարունակվեցին մինչև 1897 թ.: Արդեն 1894 թ. կոտորածներն այնքան էին տարածվել, որ դեկտեմբերի 7-ին հրաժարական տված պատրիարք Խորեն Աշըգյանին փոխարինած Մատթեոս Իզմիրլյանը Աբդուլ Համիդին ուղղված նամակում պահանջում էր դադարեցնել դրանք[24]:

Խոսելով իր հոտի ծանր կացության մասին՝ Մ. Իզմիրլյանը մեծ վեզիրին 1895 թ. փետրվարի 8-ին հղած նամակում գրում էր. «Ամենուրեք քուրդ և չերքեզ հրոսախմբեր կասպատակեն՝ անարգել և համարձակ, սպանություններ կը գործեն, կը հափշտակեն երկրա-

---

[21] **Սահակյան Ռ.,** *Յեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 152:*

[22] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 3, թ. 4:*

[23] **Սահակյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 152:*

[24] *Տե՛ս* **Համբարյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 15:*

գործ ժողովրդյան գույքն ու կենդանիներն, կը վնասեն անոնց պարենն ու խոտի դեզերն և ձմռան եղանակին մեջ գյուղացիք չը գըտնելով ուտեստ ո՛չ իրենց և ո՛չ ալ կենդանյաց համար՝ կը հարկադրին թողուլ անոնց իրենց կենդանիներն»[25]:

Ջարդերի, կողոպուտի և ավերածությունների ենթարկվեցին Տրապիզոնը, Բաբերդը, Եդեսիան, Դերջանը, Քղին, Սամսոնը, Երզնկան, Բիթլիսը, Շապին-Կարահիսարը, Կարինը, Խարբերդը, Չարսանջակը, Մալաթիան, Մարզվանը, Սղերդը, Մուշը, Դիարբեքիրը, Սեբաստիան, Վանը: Ողջ Արևմտյան Հայաստանը, հայաբնակ շրջանները բոցերի մեջ էին: Սարսափելի ջարդեր տեղի ունեցան Կ. Պոլսում: Հարկ է նշել, որ արևմտահայության աննախադեպ սպանդի հետ մեկտեղ օսմանյան իշխանություններն իրականացրին նաև ասորիների ջարդերը[26]:

Ջարդերը տարածվեցին նաև Ադանայի և Հալեպի վիլայեթներում, սակայն, պետք է նշել, որ Թուրքիայի այլ շրջանների համեմատությամբ կիլիկիահայությունն ավելի քիչ զոհեր տվեց, համեմատաբար զերծ մնաց զանգվածային կոտորածներից:

1895 թ. հոկտեմբերի վերջին հուզումներ են սկսվում Այնթապում, որոնք, հրահրվելով տեղական իշխանությունների կողմից, նոյեմբերի 4-ին վերածվում են կոտորածի: Թուրք ջարդարարները հարձակվում են հայ ոսկերիչների՝ Գազա-Ալթրի թաղամասի խանութների վրա, կողոպտում և սրի քաշում բոլորին: Հաջորդ օրը ջարդը տարածվում է ողջ քաղաքում: Սպանվում է 300 հոգի, հրդեհվում 500 տուն[27]: Կոտորածը շարունակվում է նաև հաջորդ օրերին: «Դրոշակի» հաղորդմամբ՝ շուկայում հայերի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո թուրքերը ներխուժում են հայկական թաղամասերը, կենդանի այրում շատերին՝ չխնայելով անգամ ծծկեր երեխաներին[28]: Հալեպի ռուսական հյուպատոս Մ. Յակիմանսկին՝ Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիդովին հաղորդում էր, որ «Որոշ տեղեկություններով հաշվվում են նույնիսկ ավելի քան հազար սպանվածներ և վիրավորներ: Եվ Այնթապում, և Մարաշում դիակներն այրված են և զորքերով շրջապատված, ողջ մնացած քրիստոնյաները հնարավորություն չունեն հեռանալու իրենց քաղաքներից»[29]: Ընդհանուր առմամբ զոհվում է 1000 հայ, մի քանի հազարը մնում են անօթևան[30]:

---

[25] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 3, թ. 1*

[26] **Խոսրոևա Ա.,** *Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ), Ե., 2004, էջ 43-45:*

[27] **Թառոյան Կ.,** *Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., 2001, էջ 321:*

[28] *Դրոշակ, 1907, N 1 (179):*

[29] *Տե՛ս* **Մկրտչյան Լ.,** *նշվ. հոդ., էջ 73:*

[30] **Գեղամյանց Ե.,** *Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ հայկական հարցի հինգերորդ շրջանը, Բաքու, 1915, էջ 464:*

Զարդերի սպառնալիքով մթնոլորտը շիկանում էր նաև Մարաշի գավառում: Այստեղ առաջինը հարձակման է ենթարկվում Մարաշից ոչ շատ հեռու, Ագ-սու գետի ափին, բլրի ստորոտում գտնվող Քիշիֆլի (82 տուն, 450 բնակիչ) հայաբնակ գյուղը: Սակայն հայերը դիմում են կազմակերպված դիմադրության՝ հաջողելով հետ մղել թշնամու հաջորդող գրոհները: Տեղեկանալով Քիշիֆլիում ծավալվող իրադարձությունների, հայերի ինքնապաշտպանության մասին՝ գավառի իշխանությունները «ապահովություն հաստատելու համար» ոստիկանական ջոկատ են ուղարկում, սակայն ոստիկանները «փոխանակ գյուղը պաշտպանելու, հայերուն զենքերը կհավաքեն և Մարաշ կտանին»[31]: Եվս մի ապացույց՝ հաստատելու այն իրողությունը, որ հայերի դիմադրության դեպքում ջարդերին մասնակցում էին ոստիկանությունը և բանակային կանոնավոր զորամիավորումները:

Զրկվելով զենքից՝ հայերը հաջորդ օրը հարկադրված բարձրանում են լեռները, իսկ գյուղն ամբողջությամբ կողոպտում և ավերում է թուրք խուժանը[32]: Դեպքերի ականատեսը հիշում է. «Երբ կառավարությունը կը տեղեկանա թե հայերը ա՛լ կողոպտվելիք բան մը չունին՝ քանի մի զինվոր կը ղրկե ապահովությունը իրապես հաստատելու համար»: Սակայն իրադրությունը շարունակում էր լարված մնալ, և միայն շաբաթներ անց հայերը համարձակվեցին իջնել լեռներից[33]:

Քիշիֆլիից հետո թուրք խուժանը հարձակման է ենթարկում Մարաշից հարավ, Գյավուր դաղի (Հայ լեռ) ստորոտում գտնվող հայկական Ֆընտըճագ (400 տուն, 2500 բնակիչ) և Տերե-քյոյ (140 տուն, 850 բնակիչ) գյուղերը: Իմանալով, որ թուրք խառնամբոխը մտադիր է հարձակվել Տերե-քյոյ գյուղի վրա, ֆընտըճագցիներն անմիջապես օգնության են նետվում և միացյալ ուժերով ջախջախում գյուղը շրջապատել փորձող թուրքերին: Մարտում սպանվում է նաև թշնամու առաջնորդը:

Որոշ ժամանակ անց՝ դեկտեմբերի վերջերին, թուրքերը մեկ անգամ ևս հարձակվում են՝ փորձելով գրավել Ֆընտըճագը, սակայն, հանդիպելով հայ քաջերի մահասփյուռ գնդակներին, խուճապահար նահանջում են[34]: «Ուրիշ հարձակում չի փորձվիր, և դրացի թուրքեր դիցաբանական առասպելներ կը հյուսեն այս գյուղերու մասին, հերոսացնելով անոնց ժողովուրդը իբրև երկնառաք բանակներով զորացած»[35]:

Ավերվում և կողոպտվում է Գզըլ-Աղաճ գյուղը[36]:

Կիլիկիայում թուրքական իշխանությունների առաջնահերթ նպատակն էր Զեյթունի քաջամարտիկ հայերի կոտորածը:

---

[31] **Գալուստեան Գր.,** *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ Եօրք, 1934, էջ 42:*

[32] *Զեյթունի պատմագիրքը, Բուենոս-Այրես, 1960, էջ 505:*

[33] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 42:*

[34] **Ճինպաշեան Մ.,** *նշվ. աշխ., էջ 31:*

[35] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 49:*

[36] **Ճինպաշեան Մ.,** *նշվ. աշխ., էջ 137:*

Թուրքերը ծրագրել էին անսպասելի և հուժկու հարված հասցնել գավառակի հայությանը՝ մեկուսացնելով այլ բնակավայրերից, քանզի քաջ գիտակցում էին, որ Զեյթունի ընդվզման պարագայում նրա օրինակին կարող են հետևել հարակից հայկական բնակավայրերը, որոնք, միանալով արծվաբնին, ապստամբության դրոշ կպարզեն ողջ Լեռնային Կիլիկիայով: «...Հաճնո, Զեյթունի և Տեորթ-Յոլի պես գրեթե զուտ հայկական քաղաքներուն իրարու մոտիկությունը,- գրել է հաճընցի Հ. Պողոսյանը,- կառավարության խորհիլ կուտար հայկական ապստամբության մը կարելիությունը Կիլիկիո մեջ: Այնպես որ, փոքր ու աննշան դեպքի մը և կամ արարքի մը կարևորություն տալով՝ կառավարությունը խիստ հետապնդումներ և ճնշումներ ի գործ կը դներ»[37]: Պատահական չէր, որ 1895 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից թուրքական հրամանատարությունը, գրգռելով մահմեդական խառնամբոխի կրոնական մոլեռանդությունը, հետամուտ էր այդ գյուղերի հայության տեղահանությանն ու ջարդերին:

Ավերածությունների, թալանի և կողոպուտի է ենթարկվում Զեյթունի հարավ-արևմուտքում գտնվող Անտըրրն (Էնտերուն, Անտառին) գավառակը, որի 25000 բնակչությունից 6000-ը հայեր էին: Առաջինը հարձակման է ենթարկվում Շիվիլկի հայկական գյուղը: Հայերը, մերժելով թուրքերի՝ զենքը հանձնելու պահանջը, դիմում են ինքնապաշտպանության՝ երեք օր շարունակ հաջողելով հետ մղել թշնամու գերակշիռ ուժերի գրոհները: Տեղեկանալով, որ զեյթունցիները օգնության են փութում հայրենակիցներին՝ թշնամին խուճապահար փախչում է: Զեյթունցիները նոյեմբերի 8-ին 400 հոգով հարձակվում են գավառակի կենտրոն Անտըրրնի վրա, փախուստի մատնում թուրք զինվորներին, գրավում գայմագամի նստավայրը, ազատում ավելի քան 100 բանտարկյալների: Հարձակման է ենթարկվում նաև Ենիճե Կալե (150 տուն, 800 բնակիչ) հայկական գյուղը: Այդ պահին Ֆոնուզում գտնվող 300 զեյթունցիները, իմանալով այդ մասին, Փանոս Քեշիշյանի և հնչակյան կուսակցության անդամ Հրաչյա-Մարալի (Գրիգոր Ղարիբյան) գլխավորությամբ սրընթաց օգնության են նետվում և հաջորդ առավոտյան՝ 1895 թ. նոյեմբերի 9-ին, ութժամյա համառ պայքարից հետո թշնամին հեռանում է՝ տալով 4 սպանված և 10 վիրավոր: Սակայն ավելի ուշ, երբ գյուղացիներն ապաստանել էին Զեյթունում և լեռներում, թուրքերը կողոպտում և հրդեհում են գյուղը[38]:

Թուրքական հարձակումներից զգալի տուժում և զոհեր են տալիս Կապանի, Կոկիսոնի, Քիրեճի և Թաշ-օլուգի հայերը:

Լարված իրադրություն էր նաև Մարաշում: Հայերը հասկանում էին, որ քաղաքում կուտակվող զորքը միայն Զեյթունի համար չէր, որ իշխանությունները ծրագրում են զանգվածային ջարդեր:

Իրենց հերթին թուրքական իշխանությունները, մասնավորապես Զեյթունի զորանոցի գրավումից հետո խիստ զգուշանում էին, մտա-

---

[37] **Պողոսեան Յ.,** *Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գօգան Տաղի հայ գիւղերը, Լոս-Անջելըս, 1942, էջ 553:*

[38] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 58-61:*

վախություն ունենալով, որ մարաշցիները, հետևելով իրենց քաջամարտիկ հայրենակիցների օրինակին, կդիմեն ապստամբության: Այդ իսկ պատճառով նրանք սկզբնական շրջանում աշխատում էին առիթ չտալ ցնցումների և հուզումների, որոնք կարող էին հանգեցնել անցանկալի հետևանքների: Թուրքերը սկսում են ավելի վստահ և հանդուգն գործել, երբ Մարաշ են ժամանում արաբական և սիրիական գնդերը, շրջակա գյուղերի մահմեդական խուժանը, քրդերը:

Այդ օրերին Այնթապից Զեյթուն անցնելու համար Մարաշում էին Ս. Դ. հնչակյան կուսակցության գործիչներ Նշանը, Մլեհը և Կարապետը:

Հոկտեմբերի 12(24)-ի գիշերը Զեյթուն անցնելու ճանապարհին՝ քաղաքի այգիներում, նրանք ընդհարվում են մի խումբ թուրքերի հետ: Այդ առիթն իշխանություններն օգտագործում են բռնություններ սկսելու համար: Վաղ առավոտյան ձերբակալվում են ընդհարման հետ ոչ մի կապ չունեցող, հայության շրջանում որոշակի դիրք և հեղինակություն ունեցող անձինք: Դրանով իշխանությունները ցանկանում էին Մարաշի հայությանը զրկել ղեկավար և կազմակերպող ուժից: Զարդերի առիթն արդեն կար, և «թուրք խուժանը գրգռված կուզեր իր մաղձը թափել և բացորոշապես կը սպառնար մեկի տեղ հազար հայու արյուն խմել»[39]:

Հավաքվելով շուկայում՝ թուրքերն սկսում են ընդհարումներ հրահրել, հարձակվում են մսավաճառ ոմն Պողոսի վրա, սպանում և մորթազերծ անում իր ագարակից քաղաք վերադարձող Կարապետ Թոփալյանին[40]: Խուճապահար հայերն ավելի քան 10 օր փակվում են տներում՝ հուսալով, որ կրքերը կմեղմանան, և իրենք զերծ կմնան խուժանի վայրագ կրքերին զոհ գնալուց: Զգալով կոտորածների վտանգը՝ Մարաշի հայության հոգևոր առաջնորդները հոկտեմբերի 13-ին դիմում են գավառապետին՝ հայցելով պաշտպանություն:[41]

Հոկտեմբերի 22 (նոյեմբերի 3)-ին բռնկվում է Մարաշի հայության առաջին կոտորածը: Թուրքերը, փողոցում ճանաչելով Ս.Դ. հնչակյան կուսակցության Մարաշի վարչության անդամ Սողոմոն Ալեքսանյանին, սպանում են և դիակը, ի տես հայերի, քարշ տալիս փողոցներով: Հարձակման են ենթարկվում փողոցներում և շուկայում գտնվող հայերը: Գազանաբար սպանվում է 150, վիրավորվում 300 հոգի: «Հայերը ալ ավելի կը սմքին և կը քաշվին իրենց տները»,- հիշում է այդ դժնդակ օրերի ականատեսը[42]:

Հաջորդ օրն անսպասելիորեն, ինչ-ինչ պատճառներով, ջարդը դադարում է: Դա պայմանավորված էր Զեյթունի շուրջ ծավալվող իրադարձություններով, այն հանգամանքով, որ, ինչպես նշել ենք, թուրքական իշխանություններն առաջնահերթ ձգտում էին մահացու հարվածել Զեյթունին, ապա մնացած բնակավայրերին:

---

[39] *Նույն տեղում, էջ 743:*

[40] *Նույն տեղում, էջ 744:*

[41] *Դրոշակ, 1907, N 1 (179):*

[42] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 745: Տե՛ս նաև* **Bliss E. M.** *Turkey and the Armenian atrocities, Philadelphia, 1896, p. 457.*

Տասներկու օր անց՝ 1895 թ. նոյեմբերի 2 (15)-ին, վաղ առավոտյան թուրք մոլեռանդ ամբոխը ներխուժում է Մարաշի հյուսիս-արևմուտքում գտնվող Գարամանլը թաղը և սկսում կոտորածն ու կողոպուտը: «Թաղին բնակչությունը՝ բոլորովին անպաշտպան մըշակներ, երկրագործներ և արհեստավորներ՝ բավական զոհ կուտան վայրագ խուժանին հարձակումներուն»[43]: Զարդերին մասնակցում էին նաև Մարաշ ժամանած կանոնավոր զորամասերը: Ամենուրեք լսվում էին թուրք մոլլաների՝ հայերին կոտորելու կոչերը:

Մինչդեռ վախի և սարսափի մթնոլորտում ապրող հայերը փակվել էին իրենց տներում:

Բացվում է նոյեմբերի 6(18)-ի արյունոտ առավոտը՝ «թվական մը, որ հայու արյունով գրված է Մարաշի պատմության էջերուն վրա»: Հարձակվելով հայկական թաղամասերի վրա՝ թուրք զինվորները, ոստիկանները և ամբոխը սկսում են առանց տարիքի և սեռի խտրության կոտորել հայերին, կողոպտել ունեցվածքը: Հիշում է Գր. Գալստյանը. «Կը տեսնեինք, որ տուներե հանված և խուճապահար փախչող հայերը գնդակահար ընելով Ալճար ձորը կը նետեին»[44]: Դեպքերի մեկ այլ ականատես Հակոբ Աբովյանի վկայությամբ՝ 70-80 հազարի հասնող թուրք խուժանը և զինվորները կա-ցիններով ջարդում էին հայերի տների դռները, սրի քաշում բոլորին: «Շատերը խողխողեցին,- հիշում է նա,- ոմանց վիզը ետևեն կտրեցին, ուրիշներ հրացանազուրկ ընելով կրակի մեջ նետեցին, ոմանց ալ փախչելու պահուն գլուխը տապարով ջախջախեցին և երբ ինկավ, փայտ ճեղքելու պես շերտ-շերտ կտրեցին: Թուրքեր ահա այսպես մեռցուցին քրիստոնյաները, այսպես վարվեցան այդ անգութները»[45]:

Հրդեհվեցին Գարամանլը և Շեքերտերե թաղերը, Ս. Գևորգ եկեղեցին և դպրոցը, որտեղ ապաստանած հայերը զոհ գնացին կրակե լեզվակներին: Հարձակման ենթարկվեցին նաև Գյումպեթ և Գույթուլ թաղերը: Մարդկային խիղճը կորցրած, արյան հոտից արբած թուրք խուժանը կոտորում էր տղամարդկանց, ծերերին և մանուկներին, բռնաբարում կանանց և աղջիկներին՝ հագուրդ տալով իր վայրենի կրքերին: Խաթունիե թաղում թուրք հրոսակներին համառ դիմադրություն ցույց տվեցին հայր և որդիներ Պողոս, Վարդևան և Նշան Սանթարյանները, որոնք «քաջաբար ինքնապաշտպանություն կը՝ընեն և բավական թիվով հարձակողներ գնդակահարելե ետքը՝ իրենք ալ կ՝ինյան»[46]:

Մարաշում թուրքական զորքերի հրամանատար Ջևադ փաշայի գլխավորությամբ պաշարվում է Մկրտիչ Ամիրյանի բնակարանը: Քաջորդի հայն իր որդիներ Մկրտչի և Եզրասի, փեսա Հովհաննես Ենովքյանի հետ հինգ ժամ շարունակ անհավասար մարտ է մղում թուրք կանոնավոր զորամասերի դեմ՝ զգալի կորուստներ պատճառելով: Թուրքերին հաջողվում է հրդեհել տունը, սակայն հայ խիզախները, որոնք մինչ այդ կանանց և երեխաներին տեղափոխել էին

[43] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 745:*
[44] *Նույն տեղում, էջ 746:*
[45] *Նույն տեղում:*
[46] *Նույն տեղում, էջ 747:*

անվտանգ վայր, չեն դադարեցնում մարտը՝ քաջաբար զոհվելով հայրենի տան պաշտպանության դիրքերում:

Համառ և կազմակերպված դիմադրության են հանդիպում Քյութուք Հասանի գլխավորությամբ դեպի Գյումպեթ գրոհող թուրքերը: Ինքնապաշտպանության կենտրոնը բարձունքում գտնվող Զեյթունցյանների տունն էր, որի շուրջ հայերը նախորդ օրերին պատնեշներ էին բարձրացրել, պատրաստել պաշտպանական դիրքեր: Ինքնապաշտպանության ղեկավարումը ստանձնած Հովսեփ Զեյթունցյանի գլխավորությամբ հայերը փոթորկալի կրակ են բացում թուրք հրոսակների և զինվորների վրա: Հ. Զեյթունցյանի եղբորորդի Հարությունի դիպուկ կրակոցից սպանվում է նաև Քյութուք Հասանը: Կորուստներից շփոթահար՝ թշնամին նահանջում է, վերադասավորում ուժերը և վերստին հարձակվում, սակայն իրենց դիրքերում հաստատակամ կանգնած փոքրաթիվ հայ քաջորդիները կըրկին հետ են մղում հակառակորդին: Ցավոք, մնացած թաղամասերում, ինչպես արդեն գիտենք, հայերը չկարողացան դիմել ինքնապաշտպանության. միայն մեկ օրվա ընթացքում թուրք ջարդարարները սրի քաշեցին մոտ 1000 հոգու: Մարաշցի ուսուցիչ Սողո- մոն Ոսկերիչյանի ոչ ամբողջական տվյալներով՝ միայն նոյեմբերի 6(18)-ին զոհվեցին 972 հայեր[47]: Համաձայն մեկ այլ տեղեկության՝ այդ օրը Մարաշում սպանվել էր 850, վիրավորվել 500 հայ[48]: Ինչպես գրել է միսիոներ Էդվին Մանսել Բլիսսը՝ «Հուզմունքն ու անհանգստությունը Մարաշում շարունակվում էր ավելի քան 4 շաբաթ, իսկ բուն կոտորածը տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին»: Իրավացիորեն պնդելով, որ ջարդերն արտոնված էին իշխանությունների կողմից, նա, որպես իր խոսքերի ապացույց, նշում է, որ ձերբակալվել էին հայերին օգնել փորձող հատուկենտ մահմեդականները:

Կարելի է համաձայնել Է. Մ. Բլիսսի կարծիքին, որ ջարդն ընդամենը մեկ օր տևեց, քանզի Զեյթունի հարցերը դեռևս չէին լուծվել, և Մարաշն էլ տեղ-տեղ դիմեց ինքնապաշտպանության[49]: Եվ իրոք, փոքրիկ դիմադրությունն անգամ խիստ վտանգավոր էր օսմանյան իշխանությունների համար, քանզի այն կարող էր վերածվել ապըստամբության, և այդ պարագային, երբ զեյթունցիները նորանոր հաղթանակներ էին գրանցում իրենց հաշվին, նրանք հարկադրված կլինեին մեծ ուժեր կենտրոնացնել նաև Մարաշում՝ վախենալով համընդհանուր ապստամբության հեռանկարից:

Դրությունը հաջորդ օրերին ևս շարունակում էր շիկացած և լարված մնալ՝ օդում կախված ջարդի սպառնալիքով: Ձերբակալվում է 200 հոգի՝ ենթարկվելով դաժան խոշտանգումների, կտտանքների[50]: Տվյալներ ունենալով, որ Մարաշում գործում է հնչակյան կուսակցության կազմակերպված խմբակ, որ կա որոշակի թաքցրած զենք և զինամթերք, թուրքական իշխանությունները խոշտանգում-

---

[47] *Տե՛ս նույն տեղում:*

[48] *Братская помощь пострадавшим в Турции армянам, с. 57.*

[49] **Bliss E. M.** *op. cit., p. 457-460.*

[50] **Թառոյան Կ.,** *նշվ. աշխ., էջ 321:*

ների միջոցով փորձում էին տեղեկություններ ստանալ այդ ամենի մասին, ոչ միայն հայերին զրկել առաջնորդող, կազմակերպող ուժից՝ կռվելու միջոցներից, այլև բացառել Զեյթուն հավանական օգնություն ուղարկելը: Ձերբակալվածներից շատերը սպանվում են, մի մասն էլ, չդիմանալով նվաստացնող կտտանքներին՝ ինքնասպանություն է գործում: Դաժան տանջանքների են ենթարկվում Զեյթունի կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդ Հովհաննես Կետիկյանը, Տեր Ղևոնդ և Տեր Վարդան քահանաները, Կարապետ և Հակոբ Չորպաճյանները, Նշան Քիրեճյանը, կրած տառապանքներից խելագարվում և մահանում է ուսուցիչ Հրանտ Ասլանյանը[51]:

Ծանր էր քաղաքի հայության վիճակը: Անօթևան, կողոպտված ու թալանված, սովահար մի բազմություն՝ դաժան ձմռան շեմին: Դրությունն ավելի է բարդանում, երբ թուրքական իշխանությունները Մարաշ են գաղթեցնում Զեյթունի հարակից մի շարք գյուղերի հայ ազգաբնակչությանը՝ ճանապարհին սրի քաշելով շատերին: Գաղթականները պատսպարվում են Մարաշի կիսաքանդ շենքերում: Նրանցից շատերը մահացան հիվանդություններից, սովից, ցրտից[52]:

Ընդհանուր առմամբ, Մարաշի գավառում թուրքական բարբարոսությանը զոհ է գնում 6-7 հազար հայ, իսկ Հ. Ղազարյանը զոհերի թիվը ներկայացնում է 9000[53]: Հալեպում ռուսական հյուպատոս Մ. Յակիմանսկու հաղորդմամբ՝ Մարաշի գավառում ոչնչացվել էր 75 գյուղ, հրդեհվել 2327 տուն, սրի էին քաշվել 6630 քրիստոնյաներ[54]:

Հայերը փոքր-ինչ շունչ են քաշում 1896 թ. հունվարին, երբ Մարաշ են ժամանում մեծ տերությունների հյուպատոսները: Դրանից քաջալերվելով՝ Զեյթունի ապստամբության մարաշցի բազմաթիվ մասնակիցներ վերադառնում են հայրենի քաղաք, սակայն մեծ մասը (ավելի քան 50 հոգի) ձերբակալվում է: Դրանց թվում են իրենց խիզախությամբ հայտնի և մարտերում աչքի ընկած Հարություն Տոլպաճյանը, Մանուկ Քեշիշյանը, Հակոբ Տարագճյանը, Նազար Ճեհիզյանը և այլք: Նրանց մեջ էր և Գյումպեթ թաղի ինքնապաշտպանության ղեկավար Հովսեփ Զեյթունցյանը[55], որը հանդգնել էր պաշտպանել իր ընտանիքի և հայրենակիցների կյանքն ու պատիվը: Ամենայն դաժանությամբ հաշվեհարդար տեսնելով բանտարկյալների հետ՝ թուրքերը փորձում էին տեղեկություններ քաղել Ս. Դ. հընչակյան կուսակցության Մարաշի վարչության ղեկավարի՝ «Մարուքե ճգնավորի» մասին: Չդիմանալով խոշտանգումներին, ծեծին և ստորացումներին՝ Տ. Ղևոնդ քահանա Նահապետյանը «խոստովանում» է, որ ինքն է հայտնի գործիչը, հայտարարելով, որ «օրենքը եղծանող, կաշառակեր,

---

[51] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 750-751:*

[52] **Գեղամեանց Ե.,** *նշվ. աշխ., էջ 466:*

[53] **Ղազարյան Հ.,** *Հայ ժողովրդի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, հատոր երկրորդ, Ե., 2004, էջ 67:*

[54] *Տե՛ս* **Մկրտչյան Լ.,** *Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ., Ե., 1995, էջ 125: Տե՛ս նաև* **Պողոսյան Ց.,** *նշվ. աշխ., էջ 68, 97:*

[55] **Գալուստեան Գր.,** *նշվ. աշխ., էջ 754:*

անպարկեշտ ու անարդար պաշտոնյաներուն դեմ է», պահանջելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումների իրականացում[56]:

1897 թ. մայիսին, երբ ներում է շնորհվում քաղաքական բանտարկյալներին, բանտից ազատվում են նաև կենդանի մնացած, սակայն հաշմանդամ դարձած մարաշցիները:

1895 թ. աշնանը խիստ սրվել էր իրադրությունը նաև Հաճընում և հարակից շրջաններում: Համաձայն որոշ տվյալների՝ նոյեմբերի սկզբին գավառի գյուղերը (Շար, Բանլըգ, Քյոթուն և այլն) ավերվել և կողոպտվել էին, իսկ մոտ երկու հազար բնակիչ պատսպարվել էր Հաճընում[57]: Նույն ժամանակ թուրք հրոսակները և Սըվազի չերքեզները պաշարում են Հաճընի հարևանությամբ Ռումլու գյուղաքաղաքը, որի հայությունը գիշերը մեծ դժվարությամբ, խույս տալով թշնամու հարձակումից, ապաստանում է Հաճընում: Մահմեդական խառնամբոխը մտնում է բնակավայր, թալանում, կողոպտում և հրդեհում հայերի ամայի տները: Ավերվում են գյուղաքաղաքի հարևանությամբ գտնվող 4 հայկական գյուղերը[58]: Դեպքերի ականատեսն այդ օրերի մասին գրում է. «Հայկական գավառներուն մեջ հազարավոր հայեր կը խողխողվեին անխնա, թրքական ու քրտական ուժերու կողմեն: Մարաշի և Հալեպի շրջաններուն մեջն ալ տեղ տեղ ջարդեր կ՚ունենային: Ահավասիկ արհավիրքի այս օրերուն, թեև Հաճընն ապահով ու հանդարտ կյանք մը ապրեցավ, սակայն իր շրջակա հայ գյուղերը՝ ինչպես Ռումլու, Շար և Կեռքսուն ենթարկվեցան հալածանքներու և թալանի, և անոր համար Շարի և Ռումլուի ժողովուրդը ամբողջովին, իսկ Կեռքսունի ժողովուրդը մասամբ, Հաճընն ապաստանեցան և ամեն աջակցություն ու հոգատարություն գտան հաճընցիներու կողմեն»[59]: Որոշ ընդհարումներ են լինում նաև Հաճընում: Թուրքերը հարձակվում են քաղաքի լեռներում իրենց հոտերն արածեցնող հաճընցիների վրա. հայ երիտասարդները հետ են մղում թշնամուն: Սպանվում են փայտի գնացած մի քանի հայեր: Թուրք հրոսակները հարձակվում են քաղաքի ծայրամասում գտնվող Գրիգոր Մանուկյանի տան վրա, թալանում և կողոպտում: Զեյթունին օգնության գնալու ճանապարհին սպանվում են Հովհաննես Ճիյերճյանը և իր ընկերները[60]:

Պատահական չէր, որ թուրքական իշխանությունները խուսափեցին Հաճընում հակահայկական կրքեր բորբոքելուց և ջարդեր կազմակերպելուց: Նրանք վախենում էին, որ փոքրիկ ընդհարումներն ու միջադեպերը պատճառ կարող են դառնալ հայերի ընդվզման: Ինչպես նկատել է Լ. Մկրտչյանը՝ «Բնական անառիկ դիրք ունեցող այս քաղաքը, ավելի քան հավանական էր, որ վերածվեր տարերային ապստամբության երկրորդ՝ թուրքերի համար չափազանց վտանգավոր օջախի, ինչը և խիստ մտահոգիչ էր Բ. Դռան համար»[61]:

---

[56] *Նույն տեղում, էջ 755:*

[57] **Մկրտչյան Լ.,** *նշվ. աշխ., էջ 159:*

[58] **Պողոսեան Ց.,** *նշվ. աշխ., էջ 80:*

[59] *Տե՛ս նույն տեղում, էջ 557-558:*

[60] *Նույն տեղում:*

[61] **Մկրտչյան Լ.,** *նշվ. աշխ., էջ 159:*

Կոտորածների և ավերածությունների են ենթարկվում Քիլիսը, Բիրեջիկը, Նիզիբը, Ջիբինը[62]: Բիրեջիկը թուրքերի կողմից հարձակման է ենթարկվում երկու անգամ՝ 1895 թ. հոկտեմբերի 20-ին և դեկտեմբերի 20-ին:

Ջարդերից խիստ տուժում են Ադանայի վիլայեթի Պայաս, Նաջարլի, Օջախլի, Միսիս գյուղերը՝ ենթարկվելով թուրքերի, քրդերի և չերքեզների հարձակմանը: Տեղի ունեցած վայրագությունների մասին ականատեսներից մեկը գրում էր. «Նրանք անսանձ կերպով կը վիրավորեն, կը սպանեն, ամբողջ ինչքերնին, գույքերնին, պարեննին, արմտիքնին և մետաքսի խոզաներնին կը հափշտակվեն, ավարի կուտան, գյուղերն ու ագարակները կայրեն»: Միայն Նաջարլի գյուղում հրդեհվում է 140 տուն: Չերքեզ հազարապետ Իսմայիլ բեյի հրոսակները սրի են քաշում տղամարդկանց, բռնաբարում կանանց և աղջիկներին[63]:

Ծանր վիճակ էր ստեղծվել նաև Ադանայում, «ուր շատ-շատերը սպանված են, ունեցվածքը՝ հափշտակված»[64]:

Ինչպես նշում է Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին հղած 1896 թ. հունվարի 13-ի նամակում, «Տրապիզոնից և Էրզրումից, ողջ Անատոլիայով մինչև Կիլիկիա (Մարաշ, Սիս և այլն) հայերի նկատմամբ իրականացվել են վայրագություններ, որոնք վաղօրոք կազմակերպված են եղել, տեղական իշխանությունները ոչինչ չեն արել կամ խրախուսել են հայերի կոտորածը և կողոպուտը, զորքերը մասնակցություն են ունեցել խժդժություններին ու կողոպուտներին... Ադանայում կանանց և աղջիկներին հավաքել էին մի տեղ՝ գեղեցիկներին ընտրելու, մյուսներին կոտորելու համար»[65]:[4]

1890-ականի կոտորածներով, փաստորեն, սկսվեց արևմտահայության ցեղասպանությունը: Ավելի քան 300.000 հայ զոհվեց, նույնքան էլ տարագրվեց կամ արտագաղթեց: Արտագաղթը մեծ հարված էր հայությանը: Փոխվում էր Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի, հայաբնակ շրջանների ժողովրդագրական պատկերը, քայքայվում էր տնտեսությունը, դժվարանում ազգային ազատագրության համար մղվող պայքարը. իրենց պապենական օջախները լքում էին մարդիկ, ովքեր հարկ եղած դեպքում կարող էին զենք վերցնել և մարտնչել անարգ թշնամու դեմ: Գաղթը շարունակվում էր նաև 1897 թվականին: 1897 թ. մայիսի 7-ին Կիպրոսից Եռանդ Լուսինյանը Ապահին գրում էր. «... ամեն շաբաթ խումբ-խումբ գաղթականներ կը լեցվին հույն և հայ: Մեր կողմերեն բավական մեծ բազմություն մը եկավ և տակավին պիտի գան: Շատ մ՚ալ... կուգան Հալեպեն, Այնթապեն, Մարաշեն, Քիլիսեն և այլ կողմերեն… որի՞ն հասնենք չենք գի-

---

[62] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 128:*

[63] *Դրոշակ, 1907, N 1 (179):*

[64] *Նույն տեղում:*

[65] *Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, составители: М. Г. Нерсисян, Р. Г. Саакян (այսուհետև՝ Геноцид армян...), с. 112.*

տեր»[66]: Գաղթում էին տասնյակհազարավոր հայեր (Բուլղարիա, Ռումինիա, Կիպրոս, Հունաստան, Արևելյան Հայաստան)՝ վախենալով նոր ջարդերից, զրկված լինելով ողջ ունեցվածքից, չունենալով ապրուստի և ոչ մի միջոց: «Անհրաժեշտ էր ձեռնարկել շտապ միջոցառումներ,- գրել է Է. Կոստանդյանը,- արևմտահայերին դրամական, նյութական և հոգևոր-բարոյական օգնություն հասցնելու համար, ջանքեր թափել գաղթականներին վերստին մայր երկիր դարձնելու ուղղությամբ»[67]: Այդ գերագույն խնդրի իրականացմանն են լծվում հայ հասարակական-քաղաքական շրջանակները, հայոց եկեղեցին՝ Մ. Խրիմյանի գլխավորությամբ: Կազմակերպվում են հան-գանականություններ, գումարները նպատակաուղղվում են աղետյալ վայրեր՝ վերաշինելու ավերված բնակավայրերը, մասամբ հոգալու ծով կարիքները:

Սակայն գաղթականների վերադարձը հայրական օջախներ ընթանում էր դանդաղ տեմպերով, քանզի մահվան սարսափը, կոտորածների մղձավանջը, հարազատների կորստի ցավն ապրած մարդկանց խիստ դժվար էր վերադարձնել հայրենիք, որտեղ ամեն ինչ հիշեցնում էր ոչ վաղուցվա արհավիրքների մասին, առավել ևս, որ բացակայում էին կյանքի և գույքի ապահովության երաշխիքնե- րը: Ամեն դեպքում, ձեռնարկված աշխատանքների շնորհիվ զգալի թվով մարդիկ բռնեցին հետդարձի ճամփան: Այսպես, Ֆարհատի հաղորդման համաձայն՝ Կիպրոսում, մասնավորապես Լարնակայում գտնվող գաղթական երկրացիներ՝ քիլիսեցի, մարաշցի բավական երիտասարդություններ վերադարձան երկիր»:[68]

Շատ հայեր փրկության ելքը տեսան մահմեդականություն, բողոքականություն կամ կաթոլիկություն ընդունելու մեջ՝ փաստորեն օտարվելով հայրենիքից, հայկական ոգուց և էությունից: Համաձայն մի տեղեկության՝ 559 բնակավայրերում հայերը հավատափոխ էին եղել: Միայն Բիրեջիքում մահմեդականություն էին ընդունել 200 տուն հայեր[69]:

Օգտագործելով կոտորածներից հետո ստեղծված ծանր կացությունը, ընչազուրկ մարդկանց ապահովելով սննդով և հագուստով՝ միսիոներական կազմակերպութ-յունները զբաղվում էին հոգեորսությամբ՝ օտարելով հայերին մայր եկեղեցուց, հայկական ակունքներից, արևմտահայության շրջանում տարածելով իրենց պետությունների քաղաքական և տնտեսական ազդեցությունը: Այդ մասին Աղասուն ուղղված նամակում (1896 թ. օգոստոսի 11) Բարդուղիմեոս վարդապետ Թագաճյանը գրում էր. «Կյանքերնիս գնաց, դրամներս գնաց, աղքատությունն ու թշվառությունը կրոնքնիս ալ այժմ ձեռքներուս խլելու վրա է, ոմանք բողոքականության կը դիմեն, ո

---

[66] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 72, թ. 2:*

[67] **Կոստանդյան Է.,** *Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 378:*

[68] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 8:*

[69] *Նույն տեղում, ֆ. 453, ց. 1, գ. 228, թ. 3:*

մանք կաթոլիկության, օրինյալ ազգությունն ու հայրենիքը պիտի ուրանան...»[70]:

Թուրքական բիրտ իրականության դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացրին հայտնի մտավորականներ Ժան Ժորեսը, ԱՄՆ սենատոր Ջորջ Հորը, բանաստեղծուհի Ալիս Սթոուն Բլեքուելը, Վիկտոր Բերաթը, հայտնի պատմաբան Ալբեր Վանդալը, Ֆր. դը Փրեսանսեն և այլք: Նրանք իրենց հրապարակային ելույթներում, հոդվածներում անխնա խարազանում էին մեծ տերություններին՝ պահանջելով անմիջապես կանխել ջարդերը և հետամուտ լինել բարենորոգումների իրականացմանը: 1896 թ. վերջերին հրատարակվեց Յ. Լեփսիուսի «Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանք մեծ տերությունների դեմ և կոչ քրիստոնեական Գերմանիային» աշխատությունը, որն անմիջապես թարգմանվեց ֆրանսերեն և անգլերեն, և որտեղ բերված փաստերը մեկ անգամ ևս ապացուցում էին կոտորածների՝ պետական մակարդակով կազմակերպված լինելը: Ցավոք, մեծ տերությունները փաստացի և գործնական ոչինչ չարեցին ջարդերը կանխելու ուղղությամբ: Յ. Լեփսիուսը հիմքեր ուներ գրելու, որ «...իրենց շուրթերին մշտապես ունենալով Հայաստանը և նրա բողոքները, Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերությունները երբեք լրջորեն չեն էլ մտածել նույնիսկ մատը շարժելու, որպեսզի Բարձր Դռանը ստիպեն կատարել այդ քաղցր խոստումները, պահանջել կատարել իր պարտավորությունները»[71]: Ինչպես արդեն նշել ենք, կիլիկիահայությունը, այլ շրջանների հայերի համեմատությամբ, հիմնակա-նում զերծ մնաց զանգվածային ջարդերից: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները, որոնցից թերևս գլխավորը Զեյթունի ապստամբությունն էր, որը ոչ միայն անուրանալի, հսկայական ազդեցություն ունեցավ ազատագրական պայքարի առավել ծավալման առումով, այլև թուրքական իշխանություններին հարկադրեց, Կիլիկայում համընդհանուր ապստամբության սպառնալիքն աչքի առաջ ունենալով, չտարածել ջարդերի ալիքը Ադանայի և Հալեպի վիլայեթների վրա: Հայերի հավանական ըմբոստությունն աչքի առաջ ունենալով էր, որ օսմանյան իշխանությունները գնացին որոշակի զիջումների. քրիստոնյա կառավարիչ նշանակեցին ոչ միայն Զեյթունում, այլև Հաճընում: Իր ուրախությունը հայտնելով Զեյթունում հույն կառավարչի նշանակման կապակցությամբ՝ Ս.Դ. հնչակյան կուսակցության գործիչ, Զեյթունի հերոսներից Ապահ Պետրոսյանը Նազարեթ Նորաշխարհյանին 1896 թ. հուլիսի 4(16)-ին հղած նամակում միամտորեն գրում էր. «Պայմանագրի (նկատի ունի զեյթունցիների և թուրքական իշխանությունների միջև կնքված պայմանագիրը – Ռ.Գ.) 5-րդ հոդվածը գործադրված տեսնելով՝ հույս մեծ ունենք, որ մնացած հոդվածներն ալ հետզհետե կը գործադրվին... կարելի չէ որ չի գործադրվին՝ որովհետև եվրոպական

[70] *Նույն տեղում, ֆ. 420, ց. 10, գ. 7, թ. 13:*

[71] *Տե՛ս* **Սահակյան Ռ.,** *Յեղասպանության պատմությունից, էջ 156:*

բոլոր մեծ տերությունները շատ աշխատում են, որ կնքված պայմանները կետ առ կետ գործադրվին»[72]:

Կանգ չառնելով Զեյթունի ապստամբության մանրամասների վրա՝ նշենք, որ միայն նման հերոսամարտերի միջոցով յուրաքանչյուր ժողովուրդ կարող է կռել իր ազատությունը, ձեռք բերել ապրելու և հարատևելու իրավունք[73]:

1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերի պատմությունում իր ուրույն տեղն ունի Դյորթ-Յոլի (Չոք Մարզվան) հայերի հերոսական պաշտպանությունը:

1895 թ. հոկտեմբերին թուրք և չերքեզ հրոսակները հարձակվում են Դյորթ-Յոլի հարևանությամբ գտնվող Օջախլի և Էոզեյրլի գյուղերի վրա, սկսում կոտորածը, կողոպուտն ու թալանը: Հայերը, դիմադրություն ցույց տալով, նահանջում են Չոք-Մարզվան: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, թշնամու 2000 հոգուց բաղկացած խառնամբոխը հարձակվում է Դյորթ-Յոլի վրա, բայց զարնվելով հայերի համառ պաշտպանությանը, նահանջում է: Հաջորդ գրոհը թշնամին կատարում է գյուղի արևմտյան կողմից. այստեղ ևս, հանդիպելով պաշտպանների մահասփյուռ գնդակներին, հարկադրված նահանջում է: Մարտում աչքի են ընկնում Մկրտիչ և Արիստակես Պալյանները, Համբարձում Ռուբինյանը և ուրիշներ[74]: Նույն երեկո և հաջորդ օրը թշնամին համալրում է ստանում: Դեպի Դյորթ-Յոլ են շարժվում ոչ միայն շրջակա բնակավայրերի մահմեդականները, այլև զինվորական և ոստիկանական ուժերը: Դեպքերի ականատեսը և մասնակիցը հիշում է, որ «զորք և թուրք, քուրդ և չերքեզ հազարավոր բաշիբոզուկ կատաղած խուժանն երկու կուսակալության նահանգներից (Ադանայի և Հալեպի – Ռ.Գ.), Հաճընի զորքը և շրջակա բաշիբոզուկ թուրքը մեր վրա եկան. մինչ իսկ Անտիոքա և շրջակա գյուղերից խուժանն հարձակեցան մեր վրա»[75]:

Նոյեմբերի սկզբին, ուշքի գալով կրած հարվածներից, թուրքերը կրկին հարձակվում են, բայց եռօրյա ծանր մարտերում հայ քաջորդիներին վերստին հաջողվում է հետ մղել թշնամուն: «Կռվեցանք, քաջ կռվեցանք,- հիշում է Ք. Տերտերյանը,- 8 օր շարունակ մերթ անընդհատ և մերթ թեթևակի հրացանաձգությամբ: Մեր պատրաստած խմբակներով երիտասարդներն քաջապես դիմադրեցին թշնամվույն կարկուտի նման գնդակներին, հետ մղեցինք թշնամին ամոթահար, փախան անամոթաբար, հուսախաբ, թողլով իրանց անհամար դիակներն»[76]:

Շուտով Անտիոքից 400 զինվորներով Չոք-Մարզվան է գալիս նաև Ալի բեյը և, միանալով տեղի ուժերին, անցնում հարձակման: Նոյեմբերի 6-ին նա վերջնագիր է ներկայացնում հայերին՝ պահանջելով հանձնել զենքերը: Տեսնելով, որ ուժերը խիստ անհավասար

---

[72] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 3, թ. 1:*

[73] *Զեյթունի ապստամբության մասին մանրամասն տե՛ս* **Մկրտչյան Լ.,** *նշվ. աշխ.:*

[74] **Թառոյան Կ.,** *նշվ. աշխ., էջ 323:*

[75] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 229, թ. 2:*

[76] *Նույն տեղում, թ. 1:*

են, հայերը կռվելով դուրս են գալիս գյուղից, բարձրանում լեռները՝ փրկվելով թուրքական յաթաղանին զոհ գնալուց: Հայերի հեռանալուց հետո թուրքերը կողոպտում և ավերում են գյուղը: Դյորթ-Յոլի պաշտպանության ոգին, շունչը և փաստական ղեկավարը հնչակյան կուսակցության հայտնի գործիչ մշեցի Մխո-Շահենն (Մխիթար Սեֆելյան) էր:

Կիլիկիայի 1890-ական թթ. իրադարձությունների մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև Ս. Դ. հնչակյան կուսակցության գործունեությանը, որը զգալի ազդեցություն և հեղինակություն էր ձեռք բերել կիլիկիահայության շրջանում՝ ստեղծելով կուսակցության տեղական կազմակերպությունների համեմատաբար լայն ցանց և կազմելով ֆիդայական ջոկատներ[77]: 1895 թ. Կիպրոսից Կիլիկիա է մտնում հնչակ գործիչների մի խումբ՝ Ապահը (Պետրոս Գրմզըմյան), Շավարշը (Պողոս Շիշմանյան), Մուրադը (Բաղդասար Գավուզճյան), Ջելլաթը (Կարապետ Ղրփենիսյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան), Մխո Շահենը, Հրաչյա Մարալը (Գրիգոր Ղարիբյան), Քեռին (Սարգիս Պելյան) և այլք, որոնց հայրենանվեր գործունեությունը չհապաղեց տալ իր պտուղները: Նրանք ինքնապաշտպանության պատրաստեցին և զինեցին Դյորթ-Յոլը, Սուետիան, Ֆոնուզը, Զեյթունը՝ բազմաթիվ վայրերում թշնամուն հաղթելով, փրկելով հայրենակիցների կյանքն ու պատիվը:

Եվ այդ գոյատևման ապացույցը հայ ժողովուրդը տվեց ոչ միայն Սասունում, Զեյթունում և Վանում, այլև այլուր Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, որ զենքը ձեռքին պայքար մղեց հանուն ազատության և ազգային արժանապատվության:

ПОГРОМЫ КИЛИКИЙСКИХ АРМЯН И ОБОРОНИТЕЛЬНЫЕ БОИ В 1894-1896 ГГ.

ГАСПАРЯН Р. Г.

Резюме

В результате антиармянской политики, проводимой османскими властями с последней четверти XIX в., западные армяне находилось в крайне тяжелом положении. В кругах правящей националистической турецкой элиты формировалась точка зрения, согласно которой в целях обеспечения политической, территориальной и государственной целостности Османской империи необходимо было уничтожить армянский народ физически. Начался первый этап геноцида армян. Резня 1890-х гг. и киликийские погромы 1909 г. были генеральными репетициями в плане выбора, уточнения, разработки и применения методов его осуществления. Были организованы погромы в Айнтапе, Мараше,

[77] *Պատմություն Ս.Դ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 110-113:*

Кишифле, Энтеруне, Шивилике, Шаре, Килисе, Биреджике и других местах. В сравнении с армянским населением других районов, киликийским армянам удалось избежать массового истребления. Это было обусловлено объективными причинами, в частности, Зейтунским восстанием, которое не только имело огромное значение в плане дальнейшей активизации освободительной борьбы, но и заставило турецкие власти перед лицом угрозы всеобщего восстания в Киликии отказаться от широкомасштабных погромов и их осуществления в вилайетах Аданы и Алеппо.

Кроме Зейтуна, киликийские армяне прибегли к самообороне также в ряде других районов.